ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՍՏԵՑՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԲՆՈՅԹԸ

Յայտնի է, որ Ստեփանոս Սալմաստեցին Արեւելեան Հայաստանի մելիքների յանձնարարական նամակներով, որոնք ուղղուած էին Հռոմի պապին եւ Արեւմուտքի մի քանի քրիստոնեայ պետութիւններին, անցնում է Եւրոպա՝ Հայաստանի ազատագրման համար օժանդակութիւն ապահովելու յոյսով։ Այդ կարծիքին է նաեւ Պետրովիչը[1]*։ Մեր տարակարծութիւնը նրա հետ՝ ըստ երեւոյթին կայանում է իր նպատակների իրագործման համար Սալմաստեցու ձեռք առած միջոցների գնահատման մէջ։*

Սալմաստեցին դիւանագիտական բանակցութիւնների մէջ էր մտնում Հռոմի եւ եւրոպական կաթոլիկ իշխանութիւնների հետ և հասկանալի է, որ, եթէ նրանցից օգնութիւն էր խնդրում, ինքն էլ պիտի տրամադրութիւն ցոյց տար ինչ որ բանով ու չափով փոխադարձութիւն անելու կամ խոստանալու, եւ դա՝ մի եկեղեցու գերագոյն պետի համար չէր կարող լինել այլ բան, քան զիջումներ անել կամ խոստանալ՝ կրօնական հարցերի բնագաւառում։

Եւ, ահա, մենք տեսնում ենք, որ դիւանագիտական այդպիսի հաշիւներով է, որ Սալմաստեցին 1548/1549 *թուականներին յանկարծ յայտնւում է Հռոմում՝ ցնցող տպաւորութիւն գործելով այդ միջավայրում։*

Յայտնի մտաւորական Պ. Պ. Գ. Ասեմանիսը գրում է, որ հայոց կաթողիկոս Ստեփանոսը «Հռոմ եկաւ 1548 *թուականին եւ հպատակութիւն յայտնեց Պօղոս Գ պապին ու իր դաւանութիւնը տուեց համաձայն այն դաւանանքի, որը սահմանուած էր Փլորենտեան ժողովում՝ Եւգենիոս Դ-ի ժամանակ»*[2]*։ Իսկ Վատիկանեան դիւանի մի վաւերագրի համաձայն՝* 1549 *թ. օգոստոսի* 21*-ին տեղի ունեցած կարդինալական նիստում* (Consistorium) *խօսւում է այն մասին, թէ վերջերս Հռոմ էր ժամանել մի հայ պատրիարք՝ տրամադրութիւն ցոյց տալով «հնազանդութիւն յայտնել Նորին Սրբութեանը եւ Հռոմէական Ս. Եկեղեցուն, խնդրելով, որ ժողովրդի կողմից իր անձի որպէս հայոց պատրիարք կատարուած ընտրութիւնը հաստատուի Նորին Սրբութեան կողմից» եւ թէ երեք կարդինալների յանձնարարւում է ուսումնասիրել այս հարցը՝ «խորհելու համար, թէ ի՞նչ կայ անելու եւ Նորին Սրբութեանը տեղեկացնելու»*[3]*։*

Միամտութիւն կը լինէր, սակայն, կարծել, թէ հայոց ազգային եկեղեցու դիտապետ Ստեփանոս Սալմաստեցին մինչեւ հեռաւոր Հռոմ հասնելու յոգնութիւնը յանձն էր առել պարզապէս նրա համար, որ կամաւորապէս Լատինական Եկեղեցուն նուիրաբերէր իր դարաւոր անկախ եկեղեցին, և ընդունէր նրա գահակալի հպատակութիւնը։ Եթէ նա խօսում էր այդպիսի՝ տարապայմանօրէն խոշոր զոհողութեան մասին, այն էլ մի ամբողջ ժողովրդի անունից, դա չէր լինի առանց ակնկալութիւնների եւ առանց երկկողմանի ու հաւասար պայմանների։ Եթէ մենք ընդունում ենք, որ Սալմաստեցու այս ուղեւորութեան շարժառիթը հայկական հարցն էր, ինչպէս ընդունում է եւ Պետրովիչը, եւ նա պաշտօն ունէր այդ մասին բանակցութիւններ կատարելու Հռոմում, ապա միաժամանակ պիտի ընդունենք, որ նմանօրինակ բանակցութիւնները միակողմանի պայմաններով չէ, որ կարող էին կատարուել։ Բաղա-

---

[1] ՊՍՍ էջ 11 եւ շար.։

[2] Steph.-Evod. Assemanus, «Bibliothecae Mediceae Laurentianae et Palatinae codicum mms. orientalium catalogus», Florentiae, 1742, p. 60.

[3] Archivum Secretum Vaticanum, Ac a Consistorialia incipientia ab anno 1537, temvore Pontificatus s. m. Pauli Papae III, per totum annum 1550, sub Iulio Papa III, p. 1035, 1042-1043. տես O. Raynaldus, «Annales ecclesiastici», Lucae, 1755, ad annum 1549, № 35. Հմմտ. ՊՍՍ էջ 17. PChA p. 91.